

Պարսկական տեսակներն՝ ընդհանրապէս միօրինակ, ընդհանրապէս ժուժկալ, ընդհանրապէս անյեղլի ալ՝ չեն պահանջեր այնքան արուեստգիտական ճարտարութիւն և այնքան մեծ և նուրբ հանճար, որքան գլխադրամ վարկ ու յարաբերական ճկուն ճարպիկութիւն: Աստ՛ր համար՝ այս յատկութիւններն ունեցող հայ վաճառականք աւելի՛ յաջողած են այս ճիւղին մէջ և կրցած ալ են շահիլ բաւականապէս՝ լարախաղալով այդ լպիրժ կալուածին առածիգ պարաններուն վրայ:

Կ. Պոլիսի միւս վաճառողներուն մէջ գլխաւորներ եղած են՝ ժամագործներէն՝ դարասկիզբ նշանաւոր Եուսուֆեան Բարթողիմէոսէն ետք, (որ կաթողիկոսընտիր իրողութեանց մէջ ալ ունի դեր մեծ)⁽¹⁾ Սուրէնեան Յովհաննէս, որ իր հնարամտութեանց ապացոյցները տալով բարձր անձնաւորութեանց՝ Կ. Պոլիսի պետական առեւտրական Բ. դատարանին նախ դատաւոր-անդամ ապա նախագահ նշանակուեցաւ՝ ունենալով սուր յիշողութիւն և դատաւորական բնածին հանճար, Գրիգոր Գայրգճըօղլու, Կիւմիւշկէրտան Ռուրէն, Թոսունեան Օննիկ (Իգնատիոս Մուրատճա տ՛Օհսրնի ազգականութենէն), Խանճեան Յովհաննէս (հայրը Զապէլ - Ասատուր - Սիպլիի), Սիււաարլը օղլու ևլն. Խաղէզներէն՝ առաջնակարգ Դաւիթ Սէթեան և որդին Միհրան Սէթեան, Գարակէօզեան Պետրոս, Հիսարլը Լութֆի, Գէորգեան Մկրտիչ, Էյիպլի Կարապետ. Գահվէ շէքէրի վաճառականներէն՝ Աբրահամեան Բուզանդ, Մանուէլեան ու Պէյլէրեան, Սարը Միքայէլ. Ոսկերիչներէն՝ երկան Միքայէլ, Լիմոնճը օղլու Մատաթ, Լօքմակէօզեան Երամ, Մատաթեան Յովհաննէս, Նիզամեան, Քէօմիւրճեան Մարտիրոս, Գալիամաճեան Կա-

(1) Տե՛ս Պատմութիւն Գարնդիկոսաց Էջմիածնի՝ ՄանրՄագիստրոս Մսերեանցի: